Սագորեստի, Մոխունցետի Մ., Բաքուչօղլի, Դօլօզանի, Զինկաձէ, Կապնիս-Թավա *եւ* Կիքէ *առուակները համանուն գեղերից, որոնք ոռոգում են այս գեղերը իրանց պարագաներով. ձախից ընդունում է* Խոխնա, Բզուքզուօ, Ուչխոտ, Մահլագանի *եւ* Մելխսի *առուները եւ* Խերտվիսի *մօտ խառնւում*

Արդվինում, Խատիլարում, Մուրղուլում, Մաճախելում եւ Աջարայում. հետեւաբար զարգացած էին ագարակները Տայքում-Ճորոխի վերին վտակների շուրջը. նոյնը կատարուել է ստորին վտակների ափերում. հետեւաբար քաղաքակրթութիւնը հելլէնական եւ հռոմէական-latifundaի հաւասար զարգացել է Ճորոխի աւազանում ծայրէ ծայր եւ գլորուել է միաժամանակ. ինչպէս ագարակները, նոյնպէս ամրոցները, բերդերը, դղեակները ու տաճարները եւ ուրիշ կերտուածներ աստիճանաբար զարգացել, բարձրացել եւ գլորուել են միաժամանակ ամբողջ Ճորոխի աւազանում. ոչ մի գաւառ միւսից ետ չի մնացել.

Աջարայի ամրոցների եւ տաճարների շինութիւնների աւերակները միանման են Ճորոխի աւազանի միւս գաւառների կործանումներին, միայն կրօնամոլների աւերածները այստեղ աւելի խիստ է նկատելի. Ագարակների այնքան մեծ թիւ կայ Ճորոխի աւազանում, որ ստիպուած խուզարկուն քննում է դրանք եւ հասնում է այն եզրակացութեան, որ բոլորն էլ զարգացել են, բարձրացել միաժամանակ Հռոմի եւ Հելլադայի ագարակների բարձրացման շրջանում, երբ իշխան-կալուածատէրերը ջանում էին Հռոմէական Պատրիկներին ընդօրինակել եւ նրանց նման ստրուկների ձեռքով մշակուած սեփական կալուածների տիրել. Ճորոխի աւազանում գտնուած յատուկ ձիթենիների պարտէզները, խաղողի այգեստանները, պտղատու ծառերի պարտէզները, ընկուզնոցները, կաղնինոցները, նշնոցները ստիպում են մտածելու, որ դրանք ընդօրինակուած են Յունաստանի եւ Իտալիայի latifundaներից.